



Հ.Յ.Դաշնակցություն

վճռական այո

Սահմանադրական
հանրաքվե

6 դեկտեմբերի 2015



Նոր

Սահմանադրություն

Նոր սկիզբ

Հայաստանում չեն գտնի մարդ
(մի քանիսին չհաշված),
ով փոփոխություն չի ցանկանում
ու չի պահանջում: Հ.Յ. Դաշնակցության
հանդգնամբ, փոփոխությունը պետք է լինի
խորքային ու համակարգային:
Հենց այդպիսին է կառավարման
համակարգը արմատապես փոխելը՝
կիսանախագահականից անցում կատարելով
խորհրդարանական համակարգի:
Մի անձը մյուսով փոխարինելը
ոչինչ չի տալու:

Սիրելի՛ հայրենակից, այս մի քանի էջում
կփորձենք հանրամատչելի ներկայացնել
այսօր գործող համակարգի բացերը
և Նոր Սահմանադրության
առավելությունները:



Ժամանակակից, զարգացող և մրցունակ

պետության հիմքերից է այնպիսի Սահմանադրության գոյությունը, որը պետք է ոչ միայն պաշտոնապես հռչակի և ամրագրի մարդուն և ժողովրդին (ազգին) պատկանող, նրանցից անօտարելի բնական իրավունքներն ու ազատությունները, այլև ձևավորի դրանց արդյունավետ կենսագործման պետական եղանակը:

Այսպիսի Սահմանադրության առկայությունն է ապահովել աշխարհի բազմաթիվ ժողովուրդների վերելքը՝ ձևավորելով արժանապատիվ, բարեկեցիկ և անվտանգ կյանքի պայմաններ: Լինելով բոլորի համար հավասար՝ Սահմանադրությունը օժտված է ժողովրդին համախմբելու, հզորացնելու ուժով:

Ժողովրդի և պետության հիմնական օրենք ունենալու հարցում մեր անկախության հենց սկզբից՝ 1991 թվականից Հ.Յ. Դաշնակցությունն առաջադրել և մշտապես առաջնորդվել է կայուն մոտեցումներով, մշտապես եղել է խորհրդարանական կառավարման կողմնակից:

Նախկինում դա մեզ չի հաջողվել իրագործել, այսօր այդ հնարավորությունը կա: Հարկ է արմատապես վերանայել գործող սահմանադրական կարգավորումները՝ դրանցում արտացոլելով ՀՀԴ երկու տասնամյակից ավելի առաջադրած այն սկզբունքային մոտեցումները, որոնք առնչվում են սահմանադրական կարգի հիմունքներին, մարդու բնական իրավունքներին ու ազատություններին, դրանք երաշխավորող պետական եղանակին, պետության կառավարման ձևին ու ելքյանը:

1.

Ինչու՞ փոխել սահմանադրությունը

Սահմանադրությունը ժողովրդի կամքն է՝ բարձրացված օրենքի մակարդակ: Այն մարդու և պետության միջև հիմնական հարաբերությունները սահմանող, այդ հարաբերությունները ամրագրող կանոնների ամբողջությունն է: Սահմանադրությունից են բխում հասարակական հարաբերությունների բոլոր իրավական կարգավորումները: Հետևաբար մարդու իրավունքների և ազատությունների երաշխավորումը դառնում է Սահմանադրության հիմնական խնդիրը:

1995թ. Հայաստանի Սահմանադրության առանցքը ոչ թե մարդն էր՝ իր հիմնական իրավունքներով, այլ՝ պետական իշխանության սուբյեկտ հանդիսացող Հանրապետության նախագահը: Նա ուներ իշխանության բոլոր ճյուղերի նկատմամբ գերակա դիրք: Իշխանությունների տարանջատման սկզբունքը կրում էր ձևական բնույթ: Նախագահը իր հայեցողությամբ նշանակում և ազատում էր վարչապետին, նախագահում կառավարության նիստերը, կարող էր լուծարել Ազգային ժողովը, գլխավորում էր Արդարադատության խորհուրդը, նշանակում և ազատում էր դատավորների բոլոր թեկնածուներին, գլխավոր դատախազին և այլն: Ինչպես ցույց տվեց կյանքը, նման համակարգում գրեթե անհնար էր իրագործել նույն Սահմանադրությամբ ամրագրված ժողովրդավարական և իրավական պետության կառուցումը:

2005թ. սահմանադրական բարեփոխումները, կարևոր քայլ լինելով պառլամենտարիզմի զարգացման ճանապարհին, ամբողջապես չլուծեցին «մարդակենտրոն» սահմանադրության ստեղծման և պատասխանատու իշխանության հիմնախնդիրները: Այդ Սահմանադրությունը պահպանեց «կիսանախագահական» կառավարման համակարգը, որը քաղաքական պրակտիկայում հանգեց «գերնախագահականի», քանի որ Հանրապետության նախագահը և խորհրդարանական մեծամասնությունը նույն քաղաքական ուժից են:

Գործող սահմանադրական համակարգը առանց փոփոխության թողնելը պրակտիկայում նշանակում է Սահմանադրության 2-րդ հոդվածով նախատեսված՝ ազատ ընտրությունների միջոցով ժողովրդի կողմից իշխանության ձևավորման նորմի գոյության փաստացի դադարեցում կամ այդ նորմի փաստացի գործադրման անհնարինություն:

Հետևաբար, կարելի է արձանագրել, որ, անկախության ձեռքբերումից քառորդ դար անց էլ, Հայաստանում բացակայում է ակնկալվող ժողովրդավարությունը, իշխանությունը գերկենտրոնացած է, չի գործում իրավունքի գերակայության սկզբունքը, դատարանները անկախ ու անաչառ չեն, չի արմատավորվել կառավարման արդյունավետ համակարգ: Մի խոսքով՝ մենք չունենք արդարացի երկիր:

Առ այդ՝ սահմանադրական բարեփոխումներն անհրաժեշտ են իրավական, ժողովրդավարական և սոցիալական երկիր կառուցելու համար:

2.

Որո՞նք են ղեկավարության հենասյուները

Ինչպես նշեցինք, սահմանադրական փոփոխությունների առանցքը մարդն է՝ իր իրավունքներով և ազատություններով: Ոչ թե մարդն է պետության համար այլ՝ պետությունը մարդու: Պետության գոյությունն ու գործունեությունը նախևառաջ պետք է ապահովեն մարդու բնական իրավունքների ու ազատությունների իրականացումը:

Նոր սահմանադրությամբ Հայաստանի Հանրապետությունը հռչակվում է որպես ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական կազմավորում՝ հիմնված իրավունքի գերակայության, մարդու արժանապատվության անխախտելիության, անվտանգության, ընտանիքի պաշտպանության, իշխանության բաժանման և հավասարակշռման, գաղափարախոսական բազմակարծության և բազմակուսակցական համակարգի անխախտ գործունեության, ընդհանուր, հավասար և ազատ ընտրական իրավունքի, տեղական ինքնակառավարման, սեփականության իրավունքի հավասար պաշտպանության, սոցիալական շուկայական տնտեսական կարգի երաշխավորման սկզբունքների վրա՝ որպես Հայաստանի և հայ ժողովրդի զարգացման հիմնական գրավական:

Ընդ որում՝ առաջին անգամ Հայաստանի Հանրապետությունը հայտարարում է, որ հայկական սփյուռքում իրականացնելով հայապահպանմանն ուղղված քաղաքականություն՝ նպաստելու է հայրենադարձությանը: Այսինքն, հայրենադարձությունը հռչակվում է պետական քաղաքականություն:

3.

Ի՞նչ նոր մեխանիզմներ են առաջարկվում մարդու իրավունքների ղափառանությունը ոլորտում

Սահմանադրական փոփոխությունները, բացի բազմաթիվ հստակեցումներից, ամրագրում են մարդու հիմնական իրավունքների իրականացման համար օրենքների ընդունման և կենսագործման սահմանադրական նոր սկզբունքներ՝ իրավական որոշակիությունը, համաչափությունը, պատշաճ վարչարարությունը կամ մարդու լսված լինելը, հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ դրույթների անխախտելիությունը:

Սահմանադրական մակարդակում հատուկ ամրագրվել է, որ մարդու հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները պետք է սահմանեն դրանց արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:

Առաջին անգամ անմիջական ժողովրդավարության մեծածավալ հնարավորություն է ամրագրվել: Փոփոխությունների համաձայն, քաղաքացիները կարող են նախաձեռնել հանրաքվեի միջոցով ինչպես օրենքների ընդունում, այպես էլ սահմանադրական փոփոխությունների իրականացում:

Մարդու իրավունքների և ազատությունների ապահովման տեսակետից դատական իշխանության լիազորությունների շրջանակներում ամրագրվել են նոր հնարավորություններ: Այսպես, սահմանադրական դատարանին իրավասություն է վերապահվել ստուգել ոչ միայն օրենքի, այլև ցանկացած նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարցը, եթե դրանով խախտվել են մարդու հիմնական իրավունքները և ազատությունները: Վճռաբեկ դատարանի համար սահմանվել է մարդու իրավունքների և ազատությունների հիմնական խախտումներ ունեցող դատական ակտերը վերացնելու սահմանադրական լիազորություն: Սրանք հավելյալ երաշխիքներ են մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության առումով:

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային մեխանիզմը դառնում է առավել ընդգրկուն, գործունակ և ելքային արդյունքների առումով՝ առավել նպատակային: Մարդու իրավունքների պաշտպանի լիազորության ընդլայնումը՝ օրենքով նախատեսված դեպքերում հետևել նաև որևէ կազմակերպության կողմից մարդու իրավունքի խախտման դեպքերին և նպաստել այդ իրավունքների պաշտպանությանը, էլ ավելի է ամրապնդում մարդու իրավունքների պաշտպանության ազգային մեխանիզմը:

4.

ՈՐ՞Ն է Կառավարման Նոր ձեւի առանձնահատկությունը: Ինչո՞վ է այն ավելի լավը

Ներկայումս Հայաստանի կառավարման կիսանախագահական ձևը, կրելով քաղաքական անառողջ մշակույթի ազդեցությունը, ժողովրդի կամքը ստորադասել է իշխանության կամքին: Արդյունքում ոչ միայն ձևախեղվել են պետական կառավարման բազմաթիվ ինստիտուտներ, այլև ստեղծվել է մի վիճակ, երբ յուրաքանչյուր ուժ, անհատ կամ անձանց խումբ չունի որևէ այլ ճանապարհ, քան նվաճել իշխանությունը և (կամ) ամեն գնով պահպանել այն: Այս ճանապարհին վերջինս պատրաստ է անտեսել ոչ միայն սահմանադրական բազմաթիվ դրույթներ, այլև դրանք ծառայեցնել սեփական շահերին: Առանձին դեպքերում ձևավորվում են սահմանադրությունից դուրս՝ ստվերային համաձայնություններ, որոնք ոտնահարում են իրավական պետության սահմանադրական նորմը, աղավաղում ժողովրդավարական սկզբունքները:

Այս ամենը հիմնովին փոխելու համար անհրաժեշտ է անձնակեցնորոն կառավարման համակարգից անցում կատարել բազմակուսակցական, հակակշռող և զսպող կառավարման համակարգի:

Սահմանադրական փոփոխություններով առաջարկվող կառավարման նոր ձևում իշխանությունների բաժանման և տարանջատման սկզբունքը լրացվում է քաղաքական համակարգի փոխադարձ զսպումների մեխանիզմով: «Ամեն ինչ հաղթողին է» մոտեցումը փոխարինվում է «հաղթանակը բոլորին է - պատասխանատու են բոլորը» մոտեցմամբ:

Այս պարագայում ընտրություններում հաղթող քաղաքական ուժերին հակակշռում են ընդդիմադիր ուժերը, որոնք սահմանադրական մակարդակով ստանում են իշխանության բոլոր մարմինների նկատմամբ վերահսկողության հնարավորություն՝ ի դեմս Ազգային ժողովում իրավունքի ուժով ստեղծվող քննիչ հանձնաժողովների:

Սահմանադրական փոփոխությունների արդյունքում իշխանության մարմինների ընտրության վրա ընդդիմությունը էապես ազդելու հնարավորություն է ստանում, քանի որ մի շարք պաշտոններում (բարձրագույն դատական խորհրդի հինգ անդամներ, վճռաբեկ դատարանի և սահմանադրական դատարանի դատավորներ, հաշվեքննիչ (վերահսկիչ) պալատի նախագահ և անդամներ, կենտրոնական բանկի նախագահ, կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ և անդամներ, մարդու իրավունքների պաշտպան, գլխավոր դատախազ) նշանակումների համար պահանջվում է Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն 60 տոկոսը:

Նույն պահանջն է առաջադրվում նաև մի շարք սահմանադրական օրենքների ընդունման դեպքում՝ ընտրական և դատական օրենսգրքերը, կուսակցությունների, հանրաքվեի, սահմանադրական դատարանի, մարդու իրավունքների պաշտպանի մասին, ինչպես նաև Ազգային ժողովի կանոնակարգը:

Ընդդիմությանն է վերապահվում նաև Ազգային ժողովի նախագահի երեք տեղակալներից մեկի պաշտոնը, ինչը ընդդիմության ձայնը լսելի, առաջարկությունները պարտադիր քննարկման դարձնող իրական լծակ է:

Այս համակարգը մի կողմից կուժեղացնի ընդդիմության դիրքերը, մյուս կողմից կստիպի իշխանությանը լինել հաշվետու և պատասխանատու սեփական վարքագծի համար:

Կառավարման նոր ձևում օրենսդիր և բարձրագույն ներկայացուցչական մարմինը Ազգային ժողովն է, որը ոչ միայն ընդունում է օրենքներ, այլ նաև դրանք գործադիր իշխանության կողմից կատարելու նկատմամբ ստանձնում է վերահսկողական սահմանադրական լիազորություններ: Այսինքն՝ այն արդարացի դժգոհությունը, որ «մեր երկրում օրենքները լավն են, դրանց կատարումը՝ վատը», որի համար գործող սահմանադրական իրավակարգավորումներում չկա պատասխանատու, վերածվում է պատասխանատվություն ամրագրող մեխանիզմի: Այս վերահսկողության շրջանակներում է, որ կառավարությունը մշտապես հաշվետու է լինելու Ազգային ժողովին և ժողովրդին, տարեկան զեկյույցներ պետք է ներկայացնի ինչպես իր ծրագրի կատարման, այնպես էլ պետության հիմնական նպատակների ուղղությամբ ձեռնարկված գործողությունների վերաբերյալ:

Կառավարությունը ձևավորվում և կարող է փոփոխվել կամ կոնստրուկտիվ անվստահության քվեի միջոցով (երբ վարչապետին պաշտոնանկ անելու և նոր վարչապետ ընտրելու հարցը լուծվում է միաժամանակ), կամ Ազգային ժողովի կամքի այլ դրսևորմամբ: Սակայն յուրաքանչյուր կառավարություն պետք է ունենա իր ծրագրերի կատարման համար նվազագույն ժամկետ, որը սահմանադրական փոփոխությունների համաձայն մեկ տարի է: Սա կարևոր է նաև երկրի անվտանգությունը չվնասելու առումով, քանի որ երկրի ներքին և արտաքին անվտանգության պատասխանատուն կառավարությունն է:

Երկրի կառավարման անընդհատությունը պահպանելու համար կարևոր նախապայման է, որ Ազգային ժողովը միշտ լինի գործունակ, ինչն ամենևին չի նշանակում մեծամասնություն ունեցող նույն քաղաքական միավորի մշտական գոյություն: Այս առումով կարևորվում է

Ազգային ժողովի ընտրությունը: Սահմանադրական փոփոխությունների համաձայն՝ Ազգային ժողովը ընտրվելու է բացառապես համամասնական ընտրակարգով և ունենալու է 101 պատգամավոր: Եթե ընտրության արդյունքում որևէ կուսակցություն կամ կուսակցությունների դաշինք չի ստանում ընտրողների 50 տոկոսից ավելին կամ կոալիցիայի միջոցով չի ձևավորվում կայուն խորհրդարանական մեծամասնություն, ապա կարող է անցկացվել ընտրությունների երկրորդ փուլ, որտեղ ըստ էության լուծվում է կառավարություն կազմելու իրավունքի հարցը, և որտեղ կարող են նոր քաղաքական դաշինքներ ձևավորվել: Այսինքն, ընտրության երկրորդ փուլում ժողովուրդը իր կամքը պետք է ասի, թե ո՞ր ուժին կամ ուժերի միավորմանն է տալիս կառավարություն կազմելու իրավունքը: Այս մոտեցումը ավելի արդյունավետ և ժողովրդավարական է, քանի որ մի կողմից զսպում է ընտրությանը մասնակցած քաղաքական ուժերի չհիմնավորված ցանկությունները, մյուս կողմից պարտադրում է քաղաքական ուժերին հրապարակային, այլ ոչ թե ստվերային համաձայնությունների միջոցով ձևավորել գործադիր իշխանություն և պատասխանատվություն կրել վերջինիս համար:

Պետական իշխանության երրորդ ճյուղը՝ դատականը, որը միակ պատասխանատուն է երկրում արդարադատություն իրականացնելու համար, առաջարկվող փոփոխությամբ դառնում է գործադիր և օրենսդիր իշխանություններից ավելի անկախ: Սրան նպաստում են թե դատական իշխանության մարմինների կազմավորման՝ դատավորների նշանակման և փոփոխման տարբեր սխեմաները, թե սահմանադրական մակարդակով տրվող այն լուծումները, որոնք պարտավորեցնում են այս մարմիններին գործել իրավունքի գերակայության, արդարադատության հիմնարար սկզբունքներին համահունչ: Իսկ անկախ դատական համակարգը տնտեսական հարաբերությունները արդարացի կարգավորելու գործում բացառիկ դերակատարում ունի:

Փոփոխություններով պետության գլուխը Հանրապետության նախագահն է, որի հիմնական գործառույթը սահմանադրության պահպանմանը հետևելն է: Այս գործառույթի իրականացման համար նոր Սահմանադրությամբ նա օժտվում է Սահմանադրական դատարան և ուղերձով Ազգային ժողովին դիմելու, պաշտոնների նշանակում իրականացնելու, բարձրագույն դասային աստիճաներ և զինվորական կոչումներ շնորհելու, քաղաքացիության վերաբերյալ հարցեր լուծելու, օրենքները և միջազգային պայմանագրերը ստորագրելու, դատապարտայլներին ներում շնորհելու լիազորություններով: Հստակ և աներկբա սահմանվել է, որ Նախագահը պետք է լինի անկուսակցական, անաչառ և իր լիազորություններն իրականացնելիս առաջնորդվի բացառապես համապետական և համազգային շահերով: Այս պահանջներից որևէ մեկը խախտելու դեպքում Նախագահին սպառնում է պաշտոնանկություն:

Այսպիսով կառավարման համակարգի առաջարկվող փոփոխությունները հաստատում են «գործառույթ - ինստիտուտ - լիազորություն - պատասխանատվություն» շղթայի առավել ամբողջական գործադրումը՝ ի նպաստ իրավական, ժողովրդավարական, ինքնիշխան պետության կայացման:

5.

Ե՞րբ են գործադրվելու սահմանադրական փոփոխություններով առաջարկվող նոր մոտեցումները

Սահմանադրական փոփոխությունները ամբողջ ծավալով ուժի մեջ են մտնելու 2018 թվականից՝ գործող նախագահի լիազորությունների ավարտման պահից: Սակայն մինչ այդ հարկ է ընդունել ընտրական նոր օրենսգիրքը (ուժի մեջ պետք մտնի 2016 թվականի հունիսի 1-ից, իսկ նոր կենտրոնական ընտրական հանձնաժողովը պետք է կազմավորված լինի մինչև 2016 թվականի նոյեմբերի 1-ը): Ազգային ժողովի 2017 թվականի հերթական ընտրությունները պետք է անցկացվեն ամբողջությամբ համամասնական ընտրակարգով:

Իշխանության մյուս մարմինների կազմավորումը իրականացվելու է աստիճանաբար՝ ապահովելով կառավարման նոր ձևի անցնցում և փուլային ներդրում:

Սահմանադրական կարգի հիմունքներին, ներառյալ պետականության հենասյուներին, ինչպես նաև մարդու և քաղաքացու իրավունքներին և ազատություններին վերաբերող սահմանադրության 1-ինից 3-րդ գլուխները ուժի մեջ են մտնում հանրաքվեի դրական արդյունքների դեպքում՝ դրանց պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Սիրելի՛ հայրենակից,

Դեկտեմբերի 6-ին կայանալիք
հանրաքվեի ժամանակ
դու՛ր ես որոշելու,
թե ինչպիսի
Հայաստանում ես
ուզում ասրել:

